ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ

Սինօդը՝ համաձայն Զանգուի առուի շինութեան յանձնաժողովի նախագահի զեկուցման, որոշեց. նոյն յանձնաժողովի անունով 2000 ռուբլու վարկ բանալ և պատուիրել Մ. Աթոռի գանձապահին յանձնել հետզհետէ այդ գումարը յանձնաժողովի նախագահին յատկապէս վանքապատկան հողերի ոռոգման համար առանձին առու հանելու համար։ 16 ապրիլի, թ. 150։

Սինօդը՝ քննութեան առնելով Բագուաբնակ Կարապետ Լալայեանի 40,000 ռուբլու կտակի վերաբերեալ գործը, որոշեց. նախ՝ կարդացուել ատանալ Լալայեանի ժառանգներից 40,000 ռուբլին XI հատ. I մ. 1212 յօդ. կարգովերկրորդ՝ յայտնել Ն. Գ. նախարարութեան, որ Ս. Էջմիածինը, ընդունելով դրամական նուէրներ կրթական նպատակով, չէ հանդիսանում որպէս հասարակական գործիչ, այլ իբրև օրէնքով ճանաչուած նախանձախնդիր և նպաստիչ կրթական գործի, և այդպիսի նուէրներ ընդունելու համար հայոց հոգևոր իշխանութեան իրաւասութիւնը ճանաչուած է XI հատ. I մ. 1141 յօդ. 4 կէտով, 1178 յօդ. և Կովկասի Փոխարքայի ժամ. կանոնների Բ. հատ. 1, 3, 5 և 6 յօդուածներով, և այդպիսի դէպքերում, համաձայն նոյն հատ. 1212 յօդ. չի պահանջուում առանձին թոյլտուութիւն նախարարութեան կամ այլ քաղաքական իշխանութեան կողմից։ 16 ապրիլի, թ. 151։

Սինօդը՝ համաձայն Նորին Սրբութեան Վեհափառ Կաթուղիկոսի պատուէրի և Երևանի փոխ-թեմակալի միջնորդութեան, որոշեց. ընդունել Տփխիսեցի՝ Գէորգեան ճեմարանի դպրոցաւարտ Աստուածատուր Վարդանեանին հոգևոր կոչման մէջ և կարգել նրան Սևանի մենաստանի կուսակրօն միաբան ու թոյլ տալ փոխ-թեմակալին ձեռնադրել նրան սարկաւագ նոյն մենաստանի համար։ 21 ապրիլի, թ. 157։

Սինօդը որոշեց. հաստատել Ղարաբաղի թեմական դպրանոցի 1913/14 ուսումնական տարուայ նախահաշիւը, որի

համաձայն մուտք է սպասւում. 75-ամեայ յոբելեանի առթիւ Բաղդ. Արզումանեանի նուիրած 200,000 ռուբ. տոկոս 10,000 ռուբ., Միք. Արամեանի նուիրած տան արդիւնքը 1000 ռուբ.. յոբելեանի առթիւ նուիրաբերած գումարներից մինչև այժմ ստացած 23,000 ռուբլու տոկոս 1150 ռուբ., թոշակադրամ աշակերտներից 3200 ռուբ., ծննդեան և այլ վկայագրերից 3000 ռուբ., պսակներից 2500 ռուբ., սրբադրամ արդիւնք 3000 ռուբ. Պետերբուրգի եկեղեցական խորհրդից 1500 ռուբ. և այլ զանազան մուտքեր, ընդամենը 28,850 ռուբլի, իսկ ելք՝ ռոճիկ տեսչի և ուսուցչական խմբի 21,180 ռ. «Մարիամեան» օրիորդաց դպրոցին 4000 ռուբլի փոխարինարար, մատենադարանի և ֆիզիքական կաբինետի 2500 ռուբլի, դրաւ դրած արժէթղթերի տոկոս 1200 ռուբլի, և այլ զանազան ծախքեր, ընդամենը 33,678 ռուբ., դեֆիցիտ 4825 ռուբլի։ (Յոբելեանից առաջ իւրաքանչիւր տարուայ նախահաշիւը հասնում էր 16-17 հազարի)։ 21 ապրիլի, թ. 158։

Սինոդը որոշեց. կարգել մի մասնաժողով Մ. Աթոռի միաբան տ. Ներսէս վարդապետի նախագահութեամբ և Սինոդի պաշտօնեաներ Յ. Մուշեղեանի ու Մ. Մանուէլեանի անդամակցութեամբ քննելու Զանգուի առուն հանող յանձնաժողովի դրամական հաշիւները ու մանրամասն զեկուցում ներկայացնելու Սինոդին մինչև այս տարուայ մայիսի 10-ը։ 21 ապրիլի, թ. 159։

Սինոդը՝ համաձայն Մ. Աթոռի Տպարանի վարչութեան միջնորդութեան, որոշեց. պատուիրել կոնսիստորիաներին, որ ամեն տարի նոյեմբերի մէջ հաղորդեն Տպարանի վարչութեան «Արարատ»ի բաժանորդների լիակատար ցուցակները, նշանակելով բաժանորդների անուան դէմ նրանց ուսերէն հասցէները. Տպարանի վարչութիւնն ամեն տարի պէտք է ուղարկէ 2 օրինակ նախընթաց տարուայ ցուցակներից, որպէսզի կոնսիստորիաները համապատասխան փոփոխութիւնն ու յաւելումն անեն այդ ցուցակներում և ապա վերադարձնեն։ Առաջադրել առաջնորդներին հոգ տանել «Արարատ»ի բաժանորդների թիւն

աւելացնելու և բաժանորդագները կանոնաւոր դանձելու մասին։ 25 ապրիլի, թ. 16։

Սինոդը՝ Ղարաբաղի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, որոշեց. թոյլ տալ նոյն կոնսիստորիային ընդունել հոգևոր կոչման մէջ Կուսապատ գիւղի բնակիչ Սեդրակ Տէր-Յովհաննիսեանին և պատուիրել թեմի ժամանակաւոր կառավարչին ձեռնադրել յիշեալ Տէր-Յովհաննիսեանին քահանայ Ջիւանշիրի գաւառի Մարդակերտ գիւղի վրայ, նախապէս ստորագրութիւն առնելով նրանից մինչև մահ նոյն գիւղում քահանայագործելու համար։ 28 ապրիլի, թ. 163։

Սինոդը՝ համաձայն Երևանի Նահանգական Դատարանի դատախազի այս տարուայ մարտի 31-ի, № 34 գրութեան, քննութեան առնելով Բաշապարանի ծխատէր Սահակ և Ռափայէլ Տէր-Մարտիրոսեան քահանաների մեղադրական գործը, որոշեց. յայտնել նոյն դատախազին, որ յիշեալ քահանաների յանցանքը համագիւղացի՝ այժմ կենդանի, Արամ Շահինեանի մահուան մասին ոչ ճիշտ վկայական տալու մէջ (պատժ. օր. 362 և 515 յօդ.) մեղմանում է նրանով, որ՝ նախ, Բաշապարանի 1886 թ. գերդաստանական ցուցակում Շահինեանի մահուան մասին կարմիր թանաքով ուղղումն է եղել և, երկրորդ, վախճանուած զինուորացուների ցուցակը, որի տակ ստորագրել են մեղադրուողները, կազմուած է եղել ռուսերէն, իսկ քահանաները ռուսերէն չեն իմացել։ 30 ապրիլի, թ. 172։

Սինոդը՝ քննութեան առնելով Ղարաբաղի թեմի Նախիջևանիկ գիւղի Ներսէս քահ. Տէր-Իսրայէլեանի մեղադրական գործը՝ Արսէն Ղազախեանցի և Վարթի Յակոբեանի պսակը ազդակցութեան 5-րդ աստիճանում կատարելու համար, որոշեց. 1913 թ. փետրուարի 21-ի Ամենաողորմ. Հրովարտակի զօրութեամբ (XVIII բժ. 3 կէտ.) կարճել Ներսէս քահանայի դէմ յարուցուած մեղադրական գործը, իսկ վերոյիշեալ զոյգի պսակը՝ համաձայն Մկրտիչ Ա. Կաթող. 1902 թ. յունուարի 4-ի, № 4 կոնդակի, համարել վաւերական։ 2 մայիսի, թ. 175։